ԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՆՔ

Հոդված 336. Անձի նկատմամբ ապօրինի քրեական հետապնդում իրականացնելը

1. Քննիչի կամ դատախազի կողմից անձին որպես մեղադրյալ ներգրավելը կամ նրա նկատմամբ քրեական հետապնդումը չդադարեցնելը եթե տվյալ պահին ակնհայտորեն բացակայում է այդ անձի կողմից համապատասխան հանցանքի կատարումը վկայող բավարար ապացույցների համակցությունը, ակնհայտորեն առկա է մեղսագրվող արարքի հանցավորությունը բացառող հանգամանք կամ այդ անձը ակնհայտորեն ենթակա չէ պատասխանատվության մեղսագրվող արարքի համար,

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը՝

1) անզգուշությամբ հանգեցրել է անձի մահվան,

2) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

3) զուգորդվել է անձին ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մեջ մեղադրելով,

4) մեղադրանքի արհեստական ապացույցներ ստեղծելով,

5) կատարվել է շահադիտական դրդումներով, կամ

6) հանգեցրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնասի

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասը տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:»

«Հոդված 336[1]. Անձին ապօրինի ազատազրկման դատապարտելը

1. Դատավորի կողմից անձին ազատազրկման դատապարտելը եթե ակնհայտորեն բացակայում է այդ անձի կողմից համապատասխան հանցանքի կատարումը վկայող բավարար ապացույցների համակցությունը, ակնհայտորեն առկա է մեղսագրվող արարքի հանցավորությունը բացառող հանգամանք կամ այդ անձը ակնհայտորեն ենթակա չէ պատասխանատվության մեղսագրվող արարքի համար,

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը՝

1) անզգուշությամբ հանգեցրել է անձի մահվան,

2) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

3) զուգորդվել է անձին ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար ազատազրկման դատապարտելով,

4) կատարվել է շահադիտական դրդումներով, կամ

5) հանգեցրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնասի

Deleted: Հոդված 336. ... [1]

Deleted:

Deleted: 2. Նույն

Deleted: որն

Deleted: ծանր հետևանքներ է առաջացրել՝

Deleted: ՝ երկուսից վեց

Deleted: :¶
3. Նույն արարքը, որը դիտավորությամբ ծանր հետևանքներ է առաջացրել՝¶
պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով

Deleted: :

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասը տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:»

«Հոդված 348.Ապօրինի ձերբակալելը, կալանավորելը կամ չազատելը

1. Ակնհայտ ապօրինի ձերբակալելը, կամ ձերբակալված անձին ակնհայտ ապօրինի չազատելը՝
պատժվում է կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով;

2. Ակնհայտ ապօրինի կալանավորելը, կալանավորված անձին ակնհայտ ապօրինի չազատելը կամկալանքի ժամկետը ակնհայտ ապօրինի երկարացնելը՝
պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով;

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը՝
1) անզգուշությամբ հանգեցրել է անձի մահվան,
2) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
3) կատարվել է շահադիտական դրդումներով, կամ
4) հանգեցրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնասի
պատժվում են ազատազրկմամբ՝ երեքից ութ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով;

Deleted: ¶
¶
¶
¶

Deleted: `

Deleted:

Deleted: կամ

Deleted: կալանքի տակ պահելը

Deleted:

Deleted: 3.

Deleted: արարքները, որոնք

Deleted: առաջացրել են ծանր հետևանքներ՝

Deleted: :

Հոդված 352. Ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելը

1. Դատավորի կողմից շահադիտական կամ անձնական այլ դրդումներով ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելը և եթե հանցագործություն կատարած անձի արարքում բացակայում են սույն օրենսգրքի 336[1]-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից չորս տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

3. Նույն արարքը, որը դիտավորությամբ առաջացրել է ծանր հետևանքներ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

Page 1: [1] Deleted **Author**

Հոդված 336. Ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելը

1. Անձին քրեական պատասխանատվության ենթարկելը չհաստատված հանցագործության դեպքով կամ առանց դեպքին անձի մասնակցությունը հիմնավորող կամ ոչ բավարար չափով հիմնավորող կամ առանց նրա արարքում հանցակազմը հավաստող փաստական տվյալների առկայության՝